

## ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏՄԱԲԱՆԸ

ԺԻՐԱՅՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Հայ լրագրութեան սկզբնաւորութեան ու անոր առաջին քայլերուն պատմութիւնը հարուստ է հետաքրքրական զարգացումներով: Նոյնքան հետաքրքրական են հայ լրագրութեան պատմագրութիւնն ու հայ լրագրութեան մատենագիտական գրականութիւնը:

Հայ առաջին պարբերաթերթին՝ «Ազգարար»ի գոյառումէն (1794 թ.) շուրջ կէս դար անց, կեանքի կը կոչուին հայ պարբերական հրատարակութիւններուն նուիրուած առաջին մատենագիտական յօդուածները, ցուցակներն ու ուսումնասիրութիւնները, որոնցմով հիմը կը դրուի հայ լրագրութեան պատմութեան: Մինչեւ տասնիններորդ դարու վերջերը այս ուղղութեամբ զարգացող շահագրգռութիւնը, ինչպէս նաեւ քսաներորդ դարուն նոյն գծով շարունակուող աշխատանքները, որոնք վերջին քանի մը տասնամեակներուն թափով զարգացում արձանագրեցին՝ յատկապէս Հայաստանի մէջ, առաջին հերթին կը շեշտեն կարեւորութիւնը հայ պարբերական հրատարակութիւններուն, ինչպէս եւ անոնց նուիրուած մատենագիտական գրականութեան եւ ուսումնասիրութիւններուն:

Հայրենի բանասէր եւ հայ պարբերական մամուլի հմուտ մատենագէտ Մանուէլ Ա. Բաբլոյեան ունի՝ «Հայ Լրագրութեան Առաջին Պատմարանները» խորագրուած շահեկան ուսումնասիրութիւն մը<sup>1</sup>, որ կ'ընդգրկէ 1847-1863 թթ. ու միջեւ երկարող ժամանակաշրջանը:

1. Տես՝ Մ. Ա. Բաբլոյեան, Հայ Լրագրութեան Առաջին Պատմարանները, «Պատմա-Բանասիրական Հանդէս», 1981, թիւ 2, էջ 119-133:

նի «Հայ լրագրութեան վերաբերեալ առանձին նիւթեր»: Այս ժամանակաշրջանը արդարօրէն կարելի է համարել հայ պարբերական մամուլի պատմագրութեան խանձարուրային շրջանը: Իր տեսակին մէջ եզակի այս ուսումնասիրութեամբ՝ Մ. Ա. Բարլոյեան կարելի մանրամասնութիւններով կը ներկայացնէ՝ ժամանակագրական կարգով, հայ լրագրութեան առաջին պատմաբանները՝ Փիլիպպոս Վրդ. Ճամճեան, Գրիգորիս Ալէաթճեան, Վիքթոր Լանկլուա եւ Թադէոս Միհրդատեանը<sup>2</sup>:

Եթէ Ճամճեանի ուսումնասիրութիւնը լոյս կը տեսնէ 1850 թ.ին, միւս երեքը, զարմանալի զուգադիպութեամբ, լոյս կը տեսնեն 1863

2. Վերոյիշեալ չորս բանատրեմբուն ստորագրութեամբ, կամ՝ անստորագիր, եւ սակայն անոնց վերագրուող, յաջորդաբար լոյս տեսած են հայ պարբերական մամուլի պատմութեան նուիրում հետեւեալ յօդուածներն ու ցուցակ-ուսումնասիրութիւնները. ա. [Հ. Փիլիպպոս Ճամճեան], *Ազգային Լրագիրներուն ու Օրագիրներուն Պատմութիւնը*, «Եւրոպա», Վիեննա, 1850, թիւ 28 (էջ 110-111), 30 (էջ 119), 34 (էջ 134-135), 35 (էջ 138-139), 37 (էջ 147), 38 (էջ 150-151), 40 (էջ 158-159): Փ. Ճամճեանի այս յօդուածաշարքը, «Եւրոպա»-ի 34-րդ համարէն սկսեալ կ'ունենայ խորագրի փոփոխութիւն. *Ազգային Լրագրաց ու Օրագրաց Պատմութիւնը*:

Երեք տարբեր խորագիրներով լոյս տեսած գրութիւններ՝ *Լրագրական Գլխաւոր Բառից Հաւաքում Այբուբենի Կարգաւ* («Եւրոպա», 1850, թիւ 44, էջ 163), *Նոր Օրագիր մը Յոյս* («Եւրոպա», 1850, թիւ 45, էջ 178), *Նոր Լրագիր ու Նոր Օրագիր մը* («Եւրոպա», 1851, թիւ 9), երեքն ալ անստորագիր, սակայն նոյն գրիչին պատկանող, կը հանդիսանան Փ. Ճամճեանի վերոյիշեալ յօդուածաշարքին տրամաբանական շարունակութիւնը: Նախապէս, 1848 թ.ին, Փ. Ճամճեան հրատարակած էր առաջին յօդուածաշարք մը՝ *Ազգային Լրագրաց ու Օրագրաց Օգտակար Գործածութիւնը* («Եւրոպա», 1848, թիւ 18 (էջ 78), 19 (էջ 82), 21 (էջ 92)):

բ. [Գրիգորիս Ալէաթճեան], *Նոր Դարուս Ոգին*, «Թոչնիկ Պեգասեան», Կ. Պոլիս, 1863, թիւ 1 (8 Յունուար):

Մ. Բարլոյեան անստորագիր այս յօդուածին համար կը գրէ. «Ամենայն հաւանականութեամբ այն պատկանում է խմբագիր Գր. Ալէաթճեանի գրչին» (տես՝ Մ. Բարլոյեան, *Նշ. աշխ.*, էջ 129): Մինչ Գր. Վրդ. Գալեմբեարեան ուղղակիօրէն գայն կը վերագրէ Գրիգորիս Վրդ. Ալէաթճեանին (տես՝ Գր. Գալեմբեարեան, *Պատմութիւն Հայ Լրագրութեան*, Վիեննա, 1893, էջ 201):

Իր շահեկանութեան համար կ'արժէ նշել, թէ Գրիգորիս Ալէաթճեան, որ 1863 թ.ին՝ հազիւ 23 տարու, Արմենակ Հայկունիի օգնութեամբ կը հրատարակէ «Թոչնիկ Պեգասեան» հանդէսը (1863-1866), նոյն այն անձն է, որ 1895 թ.ին Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին գահակալ կ'ընտրուի, սակայն անոր ընտրութիւնը կը բեկանուի Օսմանեան կառավարութեան կողմէ:

գ. Victor Langlois, *Les Journaux Chez Les Arméniens*, «Revue de l'Orient, de l'Algerie et de Colonies», Nouvelle Série, Tome Quinzième, Paris, 1863, pp. 256-271.

դ. Թադէոս Միհրդատեանց, *Ցուցակ Հայկական Լրագրաց եւ Հանդիսից*, «Փարիզ» Լրագիր կիսամսեայ, Բարիզ, 1863, Գ. տարի, թիւ 96, 97, 98: Թէեւ լոյս տեսած «Փարիզ»ի Օգոստոսի 7, 21 եւ Սեպտեմբրի 4 թուակիր համարներով, Միհրդատեանցի յօդուածաշարքը կը կրէ «30 Ապրիլ, 1863» թուականը:

թ-ին, միայն ամիսներու տարբերութեամբ: Մ. Բարլոյեան ոչ միայն կը ներկայացնէ իւրաքանչիւր յօդուածը առանձին-առանձին, այլեւ կը կատարէ բաղդատականը անոնց ու կու տայ գնահատականը ամէն մէկուն<sup>3</sup>: Առաւելագոյն տեղը կը տրուի, արդարօրէն, Փիլիպպոս Ճամճեանին, որուն «ուսումնասիրութեան բովանդակութեան գիտականութիւնը, տեսական լուրջ ընդհանրացումները, ընդգրկուած պարբերականների համեմատաբար մեծ թիւը՝ 17 անուն... , տուեալների վստահելիութիւնը հիմք են տալիս մեզ համարելու Փ. Ճամճեանին հայ լրագրութեան առաջին ակնառու պատմաբանը»<sup>4</sup> (ընդգծումը մեր կողմէ, Ժ. Դ.):

Հայ պարբերական մամուլի մատենագէտներուն, սակայն, ծանօթ է Փ. Ճամճեանի ուսումնասիրութենէն շուրջ երեք տարի առաջ լոյս տեսած նմանօրինակ այլ գրութիւն մը, թէեւ իր տարողութեամբ սահմանափակ եւ իր ընդգրկած պարբերութեան թիւով՝ աւելի համեստ (8 անուն): Այդ գրութիւնը, երկու մասերով, հրատարակուած է «Բազմավէպ»ի 1847 թ-ի Փետրուարի 1-ի եւ Հոկտեմբերի 15-ի համարներուն մէջ, առաջինը՝ «Ազգային Մատենագրութիւն. Լրագիրք՝ Հայաստան» եւ երկրորդը՝ «Ազգային Լրագիրք՝ Եւրոպա, Արշալոյս Արարատեան» խորագիրներով<sup>5</sup>:

«Բազմավէպ»ի այս գրութեան ծանօթ է նաեւ Մ. Բարլոյեան, որ հայ լրագրութեան նուիրուած նիւթերու գծով անդրանկութեան իրաւունքը կը վերապահէ անոնց. «Այս վերջին նիւթերից անդրանիկը պէտք է համարել «Բազմավէպի» 1847 թ. թիւ 3-ում եւ 20-ում տպագրուած անստորագիր յօդուածները»<sup>6</sup>: Մ. Բարլոյեան թէեւ կը նշէ թէ խնդրոյ առարկայ գոյգ յօդուածներն ալ կը պատկանին միեւնոյն հեղինակին, սակայն, միւս կողմէ, տողատակի ծանօթութեան մէջ կը գրէ. «Հեղինակի ով լինելը մեզ չյաջողուեց պարզել»<sup>7</sup>:

3. Ֆրանսացի պատմաբան, արեւելագետ-հայագետ Վիքոր Լանկլուայի (1829-1869) ուսումնասիրութեան անձնապէս ծանօթ է Մ. Բարլոյեան: Ընդհանրապէս ուշադրութեան արժանացած Վ. Լանկլուայի այդ գրութեան մասին ժյատ տողեր կան Գր. Վրդ. Գալեմբարեանի Պատմութիւն Հայ Լրագրութեան գիրքին մէջ (Վիեննա, 1893, էջ 199), գորս օգտագործած է Մ. Բարլոյեան:

4. Մ. Բարլոյեան, նշ. աշխ., էջ 143:

5. Տես՝ «Բազմավէպ», Վենետիկ, 1847, էջ 41-42 եւ [311]-313: Այս գոյգ յօդուածներուն մէջ՝ անստորագիր հեղինակը կ'անդրադառնայ «Դիտակ Բիզանդեան»-էն (մինչ այդ առաջին հայ պարբերականը նկատուող) յետոյ լոյս ընծայուած հետեւեալ պարբերաբերքերուն. «Արշալոյս Արարատեան» ու «Հայրենասէր» (Իզմիր), «Ազգասէր» (Կալկաթա), «Կովկաս» (Թիֆլիս), «Հայաստան» (Կ. Պոլիս), «Եւրոպա» (Վիեննա) եւ «Բազմավէպ» (Վենետիկ):

6. Մ. Բարլոյեան, նշ. աշխ., էջ 119:

7. Նոյնը:

Հայ լրագրութեան պատմութեան համար մասնաւորաբար կարեւոր է բացայայտուիմ «Բազմավէպ»ի անստորագիր յօդուածներու հեղինակին ինքնութեան, նախ՝ լոյսին բերելու համար մութին մնացած իրողութիւն մը, ապա՝ ճշդելու համար «Հայ լրագրութեան առաջին պատմարան»ին հարցը:

Յարդ ոչ միայն Մ. Բարլոյեանին, այլեւ ընդհանրապէս Հայ պարբերական մամուլի մատենագէտներուն անծանօթ մնացած է «Բազմավէպ»ի խնդրոյ առարկայ զոյգ յօդուածներուն հեղինակը: Մինչդեռ, այդ գրութիւններուն ժամանակակից շօշափելի ու համոզիչ մէկէ աւելի փաստերու լոյսին տակ, այնքան ալ դժուար չի թուիր ըլլալ ճշդուիմ անոնց հեղինակին ինքնութեան:

Ապրող Հայ Հնագոյն պարբերաթերթը՝ «Բազմավէպ»ը կը սկսի հրատարակուիլ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան կողմէ: Անոր առաջին համարը կը կրէ 1843 Յունուարի 1 թուականը<sup>8</sup>: «Բազմավէպ»ի առաջին խմբագիրը կ'ըլլայ Հ. Գաբրիէլ Այվազովսքին, հազիւ երեսուցի սահմանը թեւակոխած (ծնած՝ 1812 թ.ին) երիտասարդ ու խանդավառ միաբան մը, որ իբրեւ դաստիարակ, բանասէր ու պատմաբան, ինչպէս նաեւ խմբագիր ու հրատարակագիր<sup>9</sup>, շուրջ յիսնամեայ բեղուն գործունէութիւն մը պիտի ունենայ: Ան՝ «Բազմավէպ»ի խմբագրապետութիւնը կը վարէ մինչեւ 1848 թ., երբ Մխիթարեան Միաբանութեան կողմէ կ'ուղարկուի Բարիզ՝ ստանձնելու համար տեղի Մուրատեան վարժարանի ուսումնապետի պաշտօնը:

Ուրեմն, պարզ է որ Հայ լրագրութեան պատմութեան վերաբերող զոյգ յօդուածները կը հրատարակուին Գաբրիէլ Այվազովսքիի խմբագրապետութեան շրջանին: Անստորագիր այդ յօդուածներուն հեղինակը ուրիշը չէ, եթէ ոչ զանոնք հիւրընկալող հանդէսին խմբագիրը: Որո՞նք են տուեալները նման տեսակէտի մը ճշմարտացիութիւնը հաստատող:

Անստորագիր հեղինակը՝ իր զոյգ յօդուածներուն աւարտին, «Բազմավէպ»ի մասին կ'արձանագրէ հետեւեալը. «Իսկ մեր Բազմավէպիս գրեթէ բոլորովին տարբեր վախճան ունենալը՝ ինչպէս մեզի ասանկ ալ այլոց յայտնի է, եւ ան վախճանին հասնելու ջանքերնիս մեր

8. Թէեւ նոյն տարուան Մայիսէն առաջ լոյս չի տեսներ ան: Այս աղբյուրեամբ «Բազմավէպ»ի խմբագրութիւնը կը յայտարարէ. «Թէպէտ աս օրագիրս Յունուարի առջի օրէն պիտի հրատարակուէր, բայց զանազան պատճառներով ինչուան հիմա ուշանալուն համար՝ Մայիսէն կը սկսիմք, ու ինչուան տարեգլուխ բոլոր տարուան 24 բերքն ալ կը հանենք» (տես՝ «Բազմավէպ», 1843, թիւ 1, էջ [2]):

9. «Բազմավէպ»ի խմբագրապետի պաշտօնէն զատ, Գաբրիէլ Վրդ. Այվազովսքի, աւելի ուշ, կը հրատարակ ու կը խմբագրէ «Մասնաց Աղանի» հանդէսը, նախ Բարիզ, 1855-1858, ապա՝ Թէոդոսիա, 1860-1865 թթ.:

կողմանէ միշտ աւելնալու վրայ է՝ յուսանք որ ընթերցողաց ալ իրաւացի ակնկալութիւնը պարապ չելլեր»<sup>10</sup> :

Որեւէ հանդէսի կամ հրատարակութեան մը հետապնդած նպատակներուն եւ ապագայի ծրագիրներուն մասին այսքան յանձնառու եւ ինքնավստահ արտայայտութիւն կրնայ ունենալ միայն տուեալ թերթին տէրը կամ պատասխանատուն, այս պարագային՝ խմբագրապետը: Վերոյիշեալ փաստարկումը որքան ալ համոզիչ, սակայն տակաւին կարելի է կասկածներ սնուցանել, վերապահութիւններ բանաձեւել անոր ամբողջական ու վերջնական ճշմարտացիութեան մասին:

Առաւել համոզիչ ու առարկութիւն չվերցնող ապացոյց մը կը գտնուի «Բազմավէպ»ի 1848 թ.ի Յունուարի 15-ի համարին մէջ: Այսինքն, անստորագիր զոյգ յօդուածներէն երկրորդին լոյս ընծայումէն ճիշդ երեք ամիսներ ետք: Հանդէսի վերոյիշեալ համարին մէջ հրատարակուած է «Օրագրաց եւ Լրագրաց Վրայ» խորագրուած հետաքրքրական յօդուած մը, որ ընդհանրապէս հայ ընթերցողին կը փոխանցէ լրագիրներու եւ օրագիրներու սկզբնաւորման, անոնց կարեւորութեան, եւ զանազան երկիրներու մէջ պարբերաթերթերու տարածումին հետ առընչուող տեղեկութիւններ: Վիճակագրական տուեալներով ալ հարուստ է այս յօդուածը: Տարբերելով «Բազմավէպ»ի 1847 թուականի յօդուածներէն, այս վերջինը կը կրէ Հ. Գ. ԱՅՎ.<sup>11</sup> ստորագրութիւնը:

Մ. Բարլոյեան ծանօթ է նաեւ այս յօդուածին, ու իր ուսումնասիրութեան մէջ կ'անդրադառնայ անոր բովանդակութեան: Սակայն կը կատարէ ցաւալի սխալ մը՝ զայն վերագրելով «Գ. Այվ[ատեանի]»<sup>12</sup>, որ իսկական անծանօթ մը կը մնայ:

Ինչպէս վերեւ նշուեցաւ, այս նոր յօդուածը լոյս կը տեսնէ 15 Յունուարի, 1848 թուակիր «Բազմավէպ»ին մէջ, երբ տակաւին անոր խմբագրապետն է Գարրիէլ Այվազովսքին: Նաեւ այս իրողութեան լոյսին տակ, Հ. Գ. ԱՅՎ. ստորագրութիւնը կը պատկանի մի միայն Հ[այր] Գ[արրիէլ] Այվ[ազովսքի]ի կամ Այվ[ագեան]ի<sup>13</sup>:

Ուրեմն, «Օրագրաց եւ Լրագրաց Վրայ» յօդուածի հեղինակին ինքնութեան թիւրիմացութիւնը հարթելէ ետք, կը հեշտանայ նախապէս լոյս տեսած հայ պարբերականներու նուիրուած զոյգ յօդուածներու հեղինակին ինքնութիւնը ճշդելը:

10. Տես՝ «Բազմավէպ», 1847, էջ 313:

11. Տես՝ «Բազմավէպ», 1848, էջ 20-24:

12. Մ. Բարլոյեան, նշ. աշխ., էջ 121:

13. Գ. Այվազովսքի, այս յօդուածէն առաջ ու ետք ալ, նոյն ձեւով (Հ. Գ. ԱՅՎ.) ստորագրուած բազմաթիւ յօդուածներ ունի «Բազմավէպ»ի զանազան համարներու մէջ:

Գաբրիէլ Այվազովսքի՝ իր ստորագրութիւնը կրող յօդուածին մէջ ունի հետեւեալ հատուածը. «Մեծ ուրախութիւն է մեզի տեսնելը՝ որ հիմակուան մեր ուրիշ ազգային լրագիրներն ալ ընդհանրապէս նոյն սկզբանց վրայ են, ու ան բաներն աւելի կը ջանան սփռել ազգին մէջ՝ որոնք յայտնապէս ու հիմակուրնէ օգտակար են իրեն ուսումնական, քաղաքական ու բարոյական կրթութեանը: Մեմֆ անոնց ամէն մէկուն յատկութիւնները դեռ նոր համառօտած ըլլալով (ընդգծումը մեր կողմէ, Ժ. Դ.), հոս քիչ մը ընթերցասիրաց հմտութիւն եւ զուարճութիւն՝ քիչ մըն ալ յորդորանք տալու մտքով՝ օրագրաց եւ լրագրաց համառօտ պատմութիւնն ընենք...»<sup>14</sup>:

Ընդգծուած տողը՝ «Մենք անոնց ամէն մէկուն յատկութիւնները դեռ նոր համառօտած ըլլալով»՝ ուղղակի ակնարկութիւն է «Բազմավէպ»ի մէջ ամիսներ առաջ լոյս տեսած «նստորագիր զոյգ յօդուածներուն, ու կը բացայայտէ թէ Գաբրիէլ Այվազովսքին ի՛նքն է անոնց հեղինակը:

«Բազմավէպ»ի անստորագիր յօդուածներուն վերաբերող Գաբրիէլ Այվազովսքիի վկայութիւնը բաւարար ապացոյց է վերջնականօրէն իմանալու ինքնութիւնը հայ լրագրութեան առաջին պատմաբանին: Թէեւ այս ուղղութեամբ շահեկան վկայութիւն մըն ալ ունի հայ լրագրութեան առաջին պատմաբաններէն՝ Վիքթոր Լանկլուան, «Revue de l'Orient»ի մէջ իր ստորագրած «Հայոց Լրագիրները» խորագրով արժէքաւոր ուսումնասիրութեան մէջ<sup>15</sup>: Ան կը գրէ. «Քանի մը տարի առաջ, Բազմավէպը՝ Վենետիկի Սբ. Ղազարի Մխիթարեան Միաբանութեան ջանքերով հրատարակուող ամսական ժողովածու մը, իր սիւնակներուն մէջ տուաւ ուսումնասիրութիւն մը, ստորագրուած Հ. Գաբրիէլ Այվազովսքիէ, այժմ Պեսարապիոյ եւ Խրիմի հայոց թեմին եկեղեցական վարչութեան պատասխանատուն, որուն մէջ հեղինակը կը քննարկէ Կ. Պոլիս, Իզմիր եւ այլ վայրեր հրատարակուած հայկական լրագիրները: Այս ուսումնասիրութիւնը, որ կը բաղկանայ երկու յօդուածէ, տեղ գտած է Բազմավէպի հինգերորդ հատորին մէջ (1847, էջ 41 եւ 311). իբրեւ խորագիր ունի ան՝ Ազգային Մատենագրութիւն...»<sup>16</sup>:

Ինչպէս կը տեսնուի կատարուած մէջբերումէն, Վ. Լանկլուան աներկմտաբար «Բազմավէպ»ի յօդուածներուն հեղինակ կը ներկայացընէ Գաբրիէլ Այվազովսքին: Սակայն, երբ կը գրէ՝ «ստորագրը-

14. «Բազմավէպ», 1848, էջ 21:

15. «Revue de l'Orient...»ը տեղեկատու հրատարակութիւնն է Ֆրանսայի Արեւելիան ընկերութեան: Հանդէսի խմբագրապետի պաշտօնը վարած է հայագետ-արեւելագետ Վիքթոր Լանկլուան:

16. V. Langlois, *Les Journaux Chez Les Arméniens*, p. 257.

ուած Հ. Գաբրիէլ Այվազովսքիէ», իր կարգին ի'նք եւս դուռ կը բանայ թիւրիմացութեան մը, քանի որ այդ յօդուածները անստորագիր են: Ի՞նչը պատճառ կ'ըլլայ որ Վ. Լանկլուան կատարէ նման «անճշդութիւն» մը: Իր ուսումնասիրութեան մէջ ան կ'օգտագործէ «Բազմավէպ»ի 1847 թ.ի յօդուածներուն մանրամասնութիւնները: Ուրեմն, Լանկլուա անձնապէս ծանօթ է անոնց: Հիմքեր կան մտածելու թէ ան ծանօթ է նաեւ անոնց հեղինակին: Նշանաւոր հայագէտն ու արեւելագէտը մէկէ աւելի անգամներ եղած է Սբ. Ղազար, օգտագործած Մխիթարեան Միաբանութեան հարուստ մատենադարանը, եւ պատրաստած՝ հայագիտական բազմաթիւ բարձրարժէք ուսումնասիրութիւններ: Անձնական ծանօթութիւն եւ բարեկամութիւն հաստատած է միաբան հայրերու հետ, որոնց մէջ՝ Հ. Գաբրիէլ Այվազովսքին<sup>17</sup>: Այս տւեալներէն մեկնելով, հեշտ է եզրակացնել թէ Վ. Լանկլուան՝ «Բազմավէպ»ի հայ լրագրութեան նուիրուած անստորագիր յօդուածներուն հեղինակին ինքնութիւնը ստուգած ըլլալու է ուղղակի աղբիւրէն՝ Վենետիկի Միաբանութենէն, կամ՝ հանդէսի խմբագրութենէն, ու մինչեւ իսկ հաւանաբար յօդուածագիր Գաբրիէլ Այվազովսքիէն:

Վիքթոր Լանկլուա, իր աշխատասիրութեան մուտքին երբ կ'անդրադառնայ Գ. Այվազովսքի գրութիւններուն, կը յայտնէ նաեւ հետեւեալը. «Հ. Գաբրիէլ Այվազովսքին, իր ուսումնասիրութեան մէջ խօսած է միայն քանի մը ազգային լրագիրներու մասին, որոնք առաւել շոնդալից եղած են հայերու մօտ, եւ ան զանց ըրած է, նոյնպէս դիտումնաւոր, երկրորդական կարեւորութիւն ներկայացնող կարգ մը թերթեր»<sup>18</sup>:

Մանուէլ Բարլոյեան, տարբեր բառերով, մօտաւորապէս նոյն հաստատումը կը կատարէ, քննադատական որոշ վերաբերմունք ցուցաբերելով. «Որքան էլ հետաքրքիր ու արժէքաւոր են «Բազմավէպ»ի հեղինակի արած հակիրճ բնութագրումներն ու տուած գնահատականները վերոյիշեալ առանձին պարբերականների մասին, այնուամենայնիւ դա ժամանակի հայ մամուլի ամբողջական պատմութիւնը չէ»<sup>19</sup>:

Սակայն, երկու պարագաներուն ալ, հիմնականը մոռացութեան կը տրուի, կամ՝ կ'անտեսուի: Գաբրիէլ Այվազովսքի գրութեան նպատակը երբեք չէ եղած անդրադառնալ սկիզբէն մինչեւ իր ժամանակը կեանքի կոչուած լրագիրներուն, ինչպէս ըրած են Փ. Ճամճեանը, Գ. Ալէաթճեանը, Վ. Լանկլուան եւ Թ. Միհրդատեանցը: Անոր նպատակը

17. Sbu' Գաբրիէլ Վրդ. Չարբախյան, *Ուսումնասիրութիւնք Հայ Լեզուի եւ Մասնագրութեան ՅԱրեւմուտս (ԺԴ-ԺԹ Դար)*, Վենետիկ, 1895, էջ 220, 222:

18. V. Langlois, *Les Journaux Chez Les Arméniens*, p. 258.

19. Մ. Բարլոյեան, *Նշ. աշխ.*, էջ 121:

եղած է ընդհանուր ակնարկով մը միայն ներկայացնել իրեն ժամանակակից կարեւորագոյն պարբերական հրատարակութիւնները: Իր գրութեան ժամանակակից (1847 թ.) զանազան վայրերու մէջ լոյս տեսնող հայ լրագիրները նկատի ունեցած է ան: Եւ այս մէկը՝ Գ. Այվազովսքին կատարած է գիտակցաբար: Չէր կրնար իրեն ծանօթ չըլլալ նախապէս լոյս տեսած ու ապա դադրած թերթերու պարագան: Մանաւանդ երբ անոնցմէ ոմանք հրատարակուած են իր իսկ միաբանութեան կողմէ («Տարեգրութիւն», «Եղանակ Բիւզանդեան»): Այս գծով, տեղին է յիշել «Բազմավէպ»ի առաջին խմբագրականը՝ «Յառաջաբան» խորագրուած: Ամենայն հաւանականութեամբ՝ այս «Յառաջաբան»ը կը պատկանի Գարրիէլ Այվազովսքիի գրիչին: Նման եզրակացութիւն մը խիստ հաւանական կը թուի, եթէ նկատի ունենանք Այվազովսքիի առաջին խմբագրապետի հանգամանքը, ապա՝ գրութեան ոճն ու օգտագործուած բառամթերքը, որոնք այնքան կը յիշեցնեն հետագային գրուած հայ լրագիրներուն նուիրուած յօդուածները: Առաջին խմբագրականին մէջ կ'ըսուի. «Իրաւ է որ 1800 թուականէն ինչուան 1820 մեր տպարանէն, անկէց ետքն ալ ինչուան մօտ տարիներս ուրիշներէն, այլեւայլ բանասիրական ու քաղաքական օրագրութիւններ ելան...: Կը գովենք հիմակուան ազգասէր Զմիւռնացւոց Արշալոյս Արարատեան անունով օրագիրը... մանապէս Շտեմարան պիտանի գիտելեաց ըսուած տետրակները»<sup>20</sup>:

Այստեղ հարկ է կատարել քանի մը մատնանշումներ:

Գարրիէլ Այվազովսքի 1847 թ.ի «Բազմավէպ»ի իր ուսումնասիրութեան մէջ կը շարունակէ նկատի ունենալ «Արշալոյս Արարատեան»ը, մինչդեռ անկէ դուրս կը ձգէ բարձր գնահատուած «Շտեմարան...»ը, քանի որ այս երկրորդ հրատարակութիւնը դադրած էր 1848 թ.ին, եւ ինք նկատի չուներ դադրածները:

Փիլիպպոս Ճամճեանի ու Վիքթոր Լանկլուայի համար հայ անդրանիկ պարբերականը կը նկատուի «Դիտակ Բիւզանդեան»ը (1812 թ.): Թէեւ Ճամճեանին ծանօթ են Վենետիկի «Տարեգրութիւն»ն (1800-1802 թթ.) ու «Եղանակ Բիւզանդեան»ը (1803-1820 թթ.), սակայն անոնք իրեն համար լրագիրներէն «կը տարբերին ու գատ կարգ մը կը կացուցանեն մեր մատենագրութեան մէջ»<sup>21</sup>: Մինչդեռ, «Բազմավէպ»ի խմբագրապետին համար յստակ է. «1800 թուականէն ինչուան 1820 մեր տպարանէն... այլեւայլ բանասիրական ու քաղաքական օրագրութիւններ ելան»: 1800-1820 թթ.ուն՝ Վենետիկի Միթարեաններու տպարանէն յաջորդաբար լոյս տեսած պարբերականներն են՝ «Տարեգրու-

20. Յառաջաբան, «Բազմավէպ», 1843, էջ 4:

21. Տես՝ «Նւրոպա», 1850, թիւ 40, էջ 158:

թիւն»ը, «Եղանակ Բիւզանդեան»ը, եւ «Դիտակ Բիւզանդեան»ը, որոնք, առանց անուններով յիշատակուելու, «Բազմավէպ»ի խմբագրականին մէջ կը համարուին «օրագրութիւններ», ինչպէս կ'ընդունուին ներկայիս, առանց վերապահութեան: Մինչդեռ, Փ. Ճամճեան վարանումներ ունի անոնցմէ երկուքը «լրագիր» նկատելու:

Հայ լրագրութեան առաջին պատմաբանը՝ Գաբրիէլ Այվազովսքի, անմիջապէս անոր յաջորդող՝ Փիլիպպոս Ճամճեան, ապա՝ 13 տարի ետք, առաջին երկուքին հայ պարբերական մամուլի բանասիրական աւանդութիւնները շարունակող Վիքթոր Լանկլուա որդեգրած են նմանօրինակ մեկնակէտ մը իրենց աշխատութեանց համար: Երեքին համար ալ անձանօթ կը մնայ 1794 թ.ին Մատրասի մէջ լոյս ընծայուած հայ անդրանիկ պարբերութեթը՝ Յարութիւն Քհն. Շմաւոնեանի «Ազգարար»ը, եւ, հետեւաբար, «Դիտակ Բիւզանդեան»ը կը համարեն առաջին հայ լրագիրը:

Վիքթոր Լանկլուա սկիզբէն տեղեակ եղած է Գ. Այվազովսքիի ուսումնասիրութեան, մինչ Փ. Ճամճեանի աւելի ընդարձակ ցուցակ-ուսումնասիրութիւնը վրիպած է իր ուշադրութենէն՝ երբ ձեռնարկած է «Հայոց Լրագիրները» խորագրուած իր ուսումնասիրութեան պատրաստութեան: Այլապէս, աշխատասիրութեանը մուտքին պիտի անդրադառնար նաեւ անոր, ինչպէս ըրած է Գ. Այվազովսքիի յօդուածի պարագային: Յայտնի է սակայն որ Լանկլուա, իր աշխատանքի աւարտին իրազեկ դարձած է Փ. Ճամճեանի յօդուածին, որուն համար իր ուսումնասիրութեան կցած է «Յաւելուած» մը, ուր կը գրէ. «Վիեննայի Եւրոպա լրագիրն ալ, իր սիւնակներուն մէջ, 1850-ին, հրատարակած է հայ լրագրութեան պատմութիւն մը, օրինակովը ուսումնասիրութեան, զոր երեք տարի առաջ շարագրած էր Հ. Գ. Այվազովսքին, Վենետիկի մէջ»<sup>22</sup>:

Վ. Լանկլուա եթէ տեղեակ եղած է զինք կանխող Գ. Այվազովսքիի եւ Փ. Ճամճեանի<sup>23</sup> ուսումնասիրութիւններուն, բացայայտ է սակայն որ «Թռչնիկ Պեգասեան»ի մէջ հրատարակուած Գր. Ալէաթճեանի յօդուածին անձանօթ է ան<sup>24</sup>: Եթէ տեսած ըլլար «Թռչնիկ...»ի յօդուածը, առնուազն «Ազգարար»ի անունը պիտի ներգրաւէր իր գրութեան մէջ, որպէս առաջին թերթը՝ լոյս տեսած 1794 թ.ին, եւ պիտի չսկսէր 1812 թ.ի «Դիտակ Բիւզանդեան»ով<sup>25</sup>:

22. V. Langlois, *Les Journaux Chez Les Arméniens*, p. 271.

23. Այնպէս կը բուի թէ Վ. Լանկլուա ծանօթ է «Եւրոպա» լրագիրին մէջ լոյս տեսած ցուցակ-յօդուածին միայն, իսկ անոր հեղինակին՝ Փ. Ճամճեանին, ոչ:

24. Վ. Լանկլուա ոչ միայն Գր. Ալէաթճեանի յօդուածին ծանօթ չէ, այլեւ իր յօդուած-ուսումնասիրութեան մէջ չկայ յիշատակութիւնը «Թռչնիկ Պեգասեան»ին:

25. Գր. Ալէաթճեան հայ լրագրութեան առաջին պատմաբանն է, որ ուսումնասիր-

Գրիգորիս Վրդ. Գալէմբեարեան, իր՝ «Պատմութիւն Հայ Լրագրութեան» հատորին մէջ կը յառաջացնէ շփոթ մը, երբ կը յայտնէ թէ «Փարիզ լրագրոյ 1863, թ. 97ի մէջ եղած հայ լրագրաց ցուցակն՝ անշուշտ [Վիքթոր Լանկլուայի յօդուածին] թարգմանութիւնն է»<sup>26</sup>: Մ. Բարլոյեան կը հերքէ Գալէմբեարեանի այս վերագրումը<sup>27</sup>, ապաւինելով յատկապէս Թ. Միհրդատեանցի ցուցակ-ուսումնասիրութեան կցուած «Փարիզ» լրագիրի խմբագրութեան կարճ ներածութեան: Մ. Բարլոյեան առիթը չէ ունեցած Վ. Լանկլուայի եւ Թ. Միհրդատեանցի ուսումնասիրութիւններուն բաղդատականը կատարելու, քանի որ՝ «ինչ վերաբերում է Վ. Լանկլուայի յօդուածին, ապա ցաւօք մենք այն չկարողացանք գտնել»<sup>28</sup>:

Արդարացի է Մ. Բարլոյեան իր հերքումին մէջ: Արդարեւ, զոյգ յօդուած-ուսումնասիրութիւններուն բաղդատականը ցոյց կու տայ թէ անոնք բոլորովին կը տարբերին իրարմէ, ըստ բովանդակութեան, ոճի եւ ձեւի:

Վ. Լանկլուայի յօդուածը կ'ընդգրկէ 69 անուն պարբերաթերթ՝ 1812-էն մինչեւ 1863 թ.ի սկիզբը երկարող: Իսկ Թ. Միհրդատեանցիները՝ 77 անուն, «սկսեալ ի 1794 թուականէ մինչեւ 1863 ցվերջն ապրիլ ամսոյն, որ ըսել է 70 տարուան մէջ երեւցածներն»<sup>29</sup>: Մինչ Վ. Լանկլուայ յօդուած-ուսումնասիրութեան ձեւին կը դիմէ, եւ հայ լրագրութեան պատմութիւնը կու տայ ըստ աշխարհագրական բաժանումի, Թ. Միհրդատեանց իր ցուցակ-ուսումնասիրութեան մէջ հայկական լրագիրները կը ներկայացնէ ժամանակագրական կարգով, չեչտելով մանաւանդ անոնց մատենագիտական կողմը: Վ. Լանկլուայի յօդուածը ունի բաւական ընդարձակ մուտք մը, ուր կը խօսի հայ ժողովուրդի մշակութային ու ընկերային զարթօնքին, հայ լրագրութեան սկզբնաւորութեան, Գ. Այվազովսքիի յօդուածներուն մասին, ապա կ'անդրադառնայ երկիր առ երկիր, քաղաք առ քաղաք լոյս ընծայուած հայկական լրագիրներուն: Իսկ Թ. Միհրդատեանցի «ցուցակ»ը կը սկսի ուղղակի ժամանակագրական թուարկումովը հայ թերթերուն, իւրաքանչիւրին կցելով մատենագիտական հնարաւոր տեղեկութիւնները. — թուական, վայր, խմբագիր, թերթի բնոյթ, եւն.:

Դժուար թէ Վ. Լանկլուան, նախքան իր ուսումնասիրութեան

րութեան մը մէջ կը յիշատակէ «Ազդարար»ը իրրեւ հայ անդրանիկ լրագիրը: Թէեւ անոր մասին տուած իր տեղեկութիւնները կցկտուր, մասնակի են:

26. Գր. Գալէմբեարեան, նշ. աշխ., էջ 199:

27. Մ. Բարլոյեան, նշ. աշխ., էջ 130:

28. Նոյնը:

29. «Փարիզ», 1863, թիւ 96:

լոյս ընծայուժը, ստացած ըլլար թ. Միհրդատեանցի տուեալ ցուցակը, որուն ձեռագիրը առաքուած է իրեն, ինչպէս կը յայտնէ «Փարիզ» լրագիրը<sup>30</sup>: Այլապէս, ան յիշատակած կ'ըլլար թ. Միհրդատեանցի «ցուցակ»ին այն անունները, զորս չկան իր ուսումնասիրութեան մէջ, թէեւ անոնց թիւը այնքան ալ մեծ չէ, հազիւ քանի մը անուններ<sup>31</sup>:

Վ. Լանկլուայի ու թ. Միհրդատեանցի ուսումնասիրութիւնները, բազմաթիւ տարբերութիւններու կողքին, ունին նաեւ քանի մը հետաքրքրական նմանութիւններ, որոնցմէ կ'արժէ յիշատակել ոմանք:

Ֆրանսացի արեւելագէտ Վ. Լանկլուան իր ուսումնասիրութեան մէջ կը ներգրուէ նաեւ հայատառ թրքերէն պարբերաթերթեր («Ճէրիտէի Հաւատիս», «Մէճմուայը Հաւատիս», «Ձօհալ», «Ախպարը Գոսթանթինիէ», «Միւնատիի էրճիաս»), զանոնք արդարօրէն նկատելով հայ մամուլի լիիրաւ անդամներ: Նոյնը կը կատարէ նաեւ թ. Միհրդատեանց, որուն ներկայացուցած ցանկին մէջ կան Վ. Լանկլուայի յիշատակած բոլոր հայատառ հրատարակութիւնները, բացի «Ճէրիտէի Հաւատիս»էն, իսկ իրրեւ յաւելում ունի՝ «Ճէրիտէի Թիճարէթ»ը: Հետաքրքրական է այս պարագան անոր համար որ երկար ժամանակ, հայ մամուլի շատ մը մատենագէտներ կը փորձէին մատենագիտական ցանկերէ դուրս պահել հայատառ թրքերէն հրատարակութիւնները: Թէեւ այսօր այլեւս այդ ուղղութեամբ ոչ մէկ տարակարծութիւն գոյութիւն ունի:

Տակաւին, Վ. Լանկլուա կը յիշատակէ ձեռագիր թերթի մը պարագան. «Անգրիանուպոլիսի հայերը, 1862 թ.ին, փորձած են հրատարակել լրագիր մը, եւ ազգային վարժարանի մը աշակերտներն են որ պարտականութիւն կը ստանձնեն օրինակներ բազմացնելու: Այս լրագիրը ձեռագիր էր եւ կը կոչուէր Մրջնիկ: Դադրած է լոյս տեսնելէ»<sup>32</sup>: Նոյն թերթի մասին՝ թ. Միհրդատեանց կը գրէ. «Մրջնիկ, հանդէս հնդեսասանօրեայ, եւ ձեռագիր. սկսեալ ի 1862-ց1863. խմբագրութիւն ուսանող հայ մանկանց ի վարժարան՝ յԱգրիանուպոլիս»<sup>33</sup>: Այս թերթին, ինչպէս քանի մը այլ յիշատակուած թերթերու մասին, Մ. Բարլոյեան կը յայտնէ. «Հետագայում դրանց՝ որպէս մամուլի օրգաններ լինելու ենթադրութիւնը չհաստատուեց»<sup>34</sup>:

Երկու տարբեր, իրարմէ անկախ հեղինակներ, երբ գրեթէ նոյն

30. Նոյնը:

31. Հարկ է նշել, թէ Միհրդատեանցի «ցուցակ»ի 77 անուններուն մէջ կան այնպիսի անուններ լրագիրներու, որոնք լոյս տեսած են Վ. Լանկլուայի ուսումնասիրութեան պատրաստութեան յաջորդող ֆանի մը ամիսներուն:

32. V. Langlois, *Les Journaux Chez Les Arméniens*, p. 264.

33. «Փարիզ», 1863, բիւ 98:

34. Մ. Բարլոյեան, *Եւ. աշխ.*, էջ 132:

մանրամասնութիւններով կը նկարագրեն պարբերաթերթ մը, բաւական հիմնաւոր ու համոզիչ կը դառնայ անոր գոյութիւնը: Մանաւանդ երբ Վ. Լանկլուան կը յայտնէ, թէ իր ուսումնասիրութիւնը ամբողջական ու կատարեալ ընելու համար, Արեւելքի տարբեր շրջաններէ բերել տուած է օրինակները հայկական լրագիրներուն, իրենց ծագումէն ի վեր<sup>35</sup>:

Հետաքրքրական զուգադիպութեամբ մը՝ հայ լրագրութեան պատմութեան նուիրուած առաջին երեք աշխատանքները (ցուցակ կամ ուսումնասիրութիւն) անստորագիր են: Առաջին ստորագիր գրութիւնը կը հանդիսանայ Վ. Լանկլուայինը, որուն կը յաջորդէ՝ քանի մը ամիս տարբերութեամբ, Թ. Միհրդատեանցինը: «Եւրոպա» լրագիրին ու «Թոնչիկ Պեգասեան» յօդուածներու հեղինակներուն ինքնութիւնը արգէն ծանօթ էր հայ պարբերական մամուլի մատենագիտութեան: Այժմ, այս ուսումնասիրութեամբ, կը բացայայտուի նաեւ ինքնութիւնը առաջին յօդուածներու հեղինակին՝ Գարրիէլ Այվազովսքիի:

Ուրեմն, մատենագիտական վերոյիշեալ բացայայտումները եւ ճշգրտները իրաւունք կու տան Գ. Այվազովսքիի անունը արձանագրելու իբրեւ հայ լրագրութեան ցարդ մեզի ծանօթ առաջին պատմաբանը: Այս հաստատումը ոչ մէկ չափով կը նսեմացնէ Փ. Ծամճեանի՝ թերեւս շատ աւելի կարելոր եւ ուշագրաւ ներդրումը հայ լրագրութեան պատմագրութեան մարզին մէջ:

Արդարեւ, եթէ Գ. Այվազովսքին կը ներկայանայ իբրեւ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան «Բազմավէպ» հանդէսի առաջին հրատարակիչ-խմբագիրը, Փ. Ծամճեան կը հանդիսանայ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան «Եւրոպա» շաբաթաթերթի առաջին խմբագիրներէն եւ կորովի աշխատակիցներէն՝ մինչեւ իր վաղահաս մահը, 1853 թ.ին<sup>36</sup>: «Եւրոպա» շաբաթաթերթին մէջ է որ լոյս կը տեսնեն Փ. Ծամճեանի հայ լրագրութեան եւ հայ լեզուագիտութեան նուիրուած բազմաթիւ ուսումնասիրութիւններն ու յօդուածները, բոլորն ալ՝ անստորագիր, ինչպէս սովոր էին ընել ընդհանրապէս ժամանակակից միաբան հայրերը Մխիթարեան զոյգ միաբանութիւններուն:

Մ. Բարլոյեան՝ երբ Փ. Ծամճեանը կը հռչակէ «հայ լրագրութեան առաջին ակնառու պատմաբանը», նկատի ունի, ի շարս այլ բա-

35. V. Langlois, *Les Journaux Chez Les Arméniens*, p. 258.

36. Փ. Ծամճեանի՝ հմուտ լեզուագէտ ու քառարանագիր, 1853 թ. Յունիսի 21-ին երբ կը մահանայ հագի 34 տարեկան հասակին մէջ, իր ետին կը թողու պատկառելի վաստակ մը. քառարան, գրուցատրուբիւն, քարգմանուբիւն՝ առանձին հատորներով: Փ. Ծամճեանի կենսագրութեան եւ հայագիտական վաստակին համար տես՝ Ներսէս Վրդ-Ակիմեան, *Դասական Հայերէնը եւ Վիեննական Մխիթարեան Դպրոցը*, Վիեննա, 1932, էջ 322-342:

րեմասնութիւններու, անոր յօղուածաշարքին ընդգրկած պարբերականներուն «Համեմատարար մեծ թիւր՝ 17 անուն»: Համեմատած որո՞ւն: Անշուշտ որ նախապէս հրատարակուած անստորագիր գոյգ յօղուածներուն մէջ յիշատակուած թերթերու թիւին: Գ. Այվազովսքի կը ներկայացնէ իրեն ժամանակակից եօթը պարբերական: Կը յիշատակէ «Դիտակ Բիւզանդեան»ը իրրեւ առաջին հայ լրագիրը: 1843 թ.ի «Բազմավէպ»ի առաջին համարի խմբագրականին մէջ կայ նաեւ յիշատակուած «Շտեմարան Պիտանի Գիտելեաց»ին, որ 1847 թ.ին, երբ կը գրուին հայ լրագրութեան պատմութեան առաջին նիւթերը, դադրած էր ժամանակաւորապէս<sup>37</sup>: Ուրեմն, Գ. Այվազովսքի յիշատակած կ'ըլլայ ինն անուն: Միւս կողմէ, Փ. Ճամճեանի ներկայացուցած տասնեօթ պարբերաթերթերէն վեցը լոյս կը տեսնեն 1847 թ.էն ետք, մինչեւ 1851 թ.ի սկիզբը: Ժամանակի այս պարագան եթէ նկատի ունենանք, Փ. Ճամճեանի ցանկը մինչեւ 1847 թ. լոյս տեսած միայն 11 պարբերաթերթ կը յիշատակէ, այսինքն՝ միայն երկու պարբերաթերթ աւելի Գ. Այվազովսքիի ներկայացուցածներէն: Այդ երկուքը — «Լրոյ Գիր»ն ու «Ազդարար Բիւզանդեան»ը — դադրած էին Գ. Այվազովսքիի ուսումնասիրութեան պատրաստութեան ժամանակ, եւ այդ պատճառով ալ դուրս մնացած անկէ:

Փիլիպպոս Ճամճեանի հայ լրագրութեան նուիրուած նիւթերուն արժանիքը կը կայանայ, առաջին հերթին, անոնց գիտականութեան եւ առարկայականութեան մէջ: Իսկ աւելի մեծ ծառայութիւնը, զոր ան կը մատուցանէ ընդհանրապէս հայ մատենագիտութեան եւ ի մասնաւորի հայ լրագրութեան, ստեղծումն ու ընդհանրացումն է հայ լրագրութեան մասնագիտական բառամթերքին<sup>38</sup>: Ներսէս Վրդ. Ակինեանի վկայութեամբ՝ «լրագրական, հասարակական, տնտեսական շատ մը բառեր կ'երտուեցան առաջին անգամ Ճամճեանէն Սերոպայի մէջ եւ ընդհանրացան հայ շրթունքի վրայ»<sup>39</sup>:

Գարրիէլ Այվազովսքին, Փիլիպպոս Ճամճեանը, Գրիգորիս Ալէաթճեանը, Վիքթոր Լանկլուան եւ Թադէոս Միհրդատեանցը յաջորդարար կը հանդիսանան հայ լրագրութեան առաջին պատմաբանները, որոնք ոչ միայն ամուր հիմերը կը դնեն այդ պատմագրութեան, այլեւ՝ քար առ քար կը բարձրացնեն առաջին պատերը հայ մամուլի մատենագիտութեան համար նոր ու գեղակերտ կառոյցի մը:

37. «Շտեմարան Պիտանի Գիտելեաց»ը Իզմիրի մէջ լոյս կը տեսնէ որոշ ընդհատումներով՝ 1839-1842, 1844-1846 թթ.ուն եւ 1854 թ.ին՝ Պոլիս:

38. Տես՝ Փ. Ճամճեան, Լրագրական Գլխաւոր Բաժնից Հաւաքում Այբուբենի Կարգաւ, «Ներսէս», 1850, թիւ 44:

39. Ն. Ակինեան, Ակնարկ մը Վիեննական Միտիթարեան Միաբանութեան Գրական Գործունէութեան վրայ, Վիեննա, 1912, էջ 56:

**THE FIRST HISTORIAN OF THE ARMENIAN PERIODICALS**

JIRAIR TANIELIAN

**(Summary)**

The first Armenian periodical, "Azatar", was published in the year 1794, in Matras, India. Half a century later, the first bibliographical lists and studies dedicated to the history of the Armenian periodical started to appear. The first known historians of the Armenian periodicals were, in historical order, Philipos Jamjian, Grigoris Aleatjian, Victor Langlois, and Thateos Mihrtadians. The article sheds new light on the question and shows that the author of the two unsigned articles — published in "Paz-maveb" (Venice) in the year 1874, and dedicated to the history of the Armenian periodical — is Father Gabriel Aivazovsky (Aivazian). The author declares him to be the father of the history of the Armenian periodical.